

ՀԱՅՐԵՆԱՆՎԵՐ ՊԱՏՄԱԲԱՆՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

(Չեկուցում՝ կարդացված Բ. Հարությունյանի ծննդյան 75-ին նվիրված գիտաժողովում)



Անվանի պատմաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ երկարամյա դասախոս, Հայոց պատմության ամբիոնի նախկին վարիչ, շուրջ տասը տարի Ֆակուլտետը ղեկավարած վաստակաշատ գիտնական, Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիայի նախկին վարիչ (այժմ Բ. Հարությունյանի անունով անվանակոչված) Բաբկեն Հարությունի Հարությունյանի 75-ամյակը լրացավ այս տարի, ընդամենը մի քանի օր առաջ՝ մարտի 4-ին: Սակայն շատ ավիտոս, որ նա չի զգալու իր հոբբեյանական տարելիցի բերկրանքը: Նրա ապրած կյանքի

իմաստավորված 72 տարիները դեռ երկար են զգացնել տալու բեղմնավոր վաստակի արգասիքը:

Բ. Հարությունյանը ծնվել է 1941 թ. մարտի 4-ին Երևանում, Մեծ եղեռնի սարսափները տեսած և 1915թ. բնօրրան Վանից գաղթած ընտանիքում: Մայրը ծագումով Լոռվա Գյուլագարակ գյուղից էր՝ Արփենիկ Մատինյանը, որը շատ արագ մերվել էր վանեցիների միջավայրին՝ յուրացնելով նրանց ավանդույթներն ու բարբառը: «Մանկությունս և պատանեկությունս անցել է Երևանի Այգեստան թաղամասում, ասում էր Բաբկեն Հարությունյանը,- որտեղ պապս՝ Միհրան Հարությունյանը, շուրջ մեկ հեկտար այգի ուներ: 1946 թ. ջրհեղեղից հետո այդ և շրջակա այգիները պետականացվեցին: Ապագա պատմաբանը հասակ էր առել խստաբարո, սակայն անաչառ ու բարի, հյուրընկալ ու համեստ ծնողների հոգատարության ներքո, ընտանիք, որտեղ տիրապետում էր անսահման աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հարգանքը մեկը մյուսի ու շրջապատի հանդեպ, որտեղ ուսումը հարգի էր և պատահական չէ, որ վարպետ Հարությունի բոլոր երեք զավակներն էլ ոչ միայն հիմնավոր կրթություն ստացան, այլև իրենց խոսքն ասացին գիտության մեջ:

Դեռ Հ. Աճառյանի անվան դպրոցում ուսանելիս ի հայտ եկան ապագա գիտնականի՝ աշխատասիրությամբ զուգորդված փայլուն ընդունակությունները և սերը՝ հատկապես մայր ժողովրդի պատմության նկատմամբ: «Շատ էի սիրում մաթեմատիկա, քիմիա, աշխարհագրություն, պատմություն և այլն: Հնարավոր է, որ ես մաթեմատիկոս էլ դառնայի, եթե տեղի չունենար մի անակնկալ իրադարձություն,- գրում է Բ. Հարությունյանը, - Հայաստանի գիտությունների ակադեմիայի հին շենքում, որն այսօր գոյություն չունի և ուրս տեղավորված էր ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտը, կազմա-

կերպել էր դպրոցականների հանդիպում գիտնականների հետ: Այդ ժամանակ ես սովորում էի Հր. Աճառյանի անվան դպրոցի 7-րդ դասարանում: Հանդիպման ժամանակ իմ ակտիվությունը գրավել էր Լեզվի ինստիտուտի գլխավոր տնօրեն ակադեմիկոս Արարատ Ղարիբյանի ուշադրությունը, որը մի քանի օր անց ինձ ներկայացրեց ակադեմիկոս Ս. Երեմյանին՝ Պատմության ինստիտուտի տնօրենին: Երկուսի կարծիքով էլ ճիշտ կլիներ, որ ես պատմաբան դառնայի: Դա էր պատճառը, որ դպրոցն ոսկե մեդալով ավարտելուց հետո, 1958 թ. ընդունվեցի ԵՊՀ պատմության ֆակուլտետ»:

Դրանից հետո անվանի հայագետի գիտական ու մանկավարժական գործունեությունը ավելի քան կես դար անխզելիորեն կապված էր մայր բուհի՝ ԵՊՀ հետ: Լինելով համալսարանի լավագույն ուսանողներից և այն ժամկետից շուտ 1962 թ. գերազանց գնահատականներով ավարտելով՝ Բ. Հարությունյանը 1963 թ. ընդունվել է ԵՊՀ-ի ասպիրանտուրա՝ «Հայոց պատմություն» մասնագիտությամբ: Ակադեմիկոս Ս. Երեմյանի ղեկավարությամբ 1968 թ. նա հաջողությամբ պաշտպանել է թեկնածուականատենախոսություն «Վայոց ձորը հնագույն ժամանակներից մինչև 1045 թիվը» պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն թեմայով և արժանացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի: Թեմայի ընտրությունն իսկ վկայում էր, որ երիտասարդ հետազոտողը բռնել է ինչպես չտրորված արահետներով ընթանալու, գիտության մեջ իր ինքնուրույն խոսքն ասելու, այնպես էլ ալիշանական բարի ավանդույթները զարգացնելու դժվարին, բայց շնորհակալ ուղին: Պատմական և աշխարհագրական հասուն քննությամբ Բ. Հարությունյանը հանգել էր ուշագրավ եզրահանգումների և կատարել բազմաթիվ ճշգրտումներ, որոնք չնայած գործադրած համառ ջանքերին՝ պատմության աղբբեջանական կեղծարարներն ի զորու չէին վիճարկել: Բ. Հարությունյանը ծավալում էր բուռն գիտական գործունեություն՝ այն հաջողությամբ զուգակցելով դասախոսական, վարչական ու հասարակական աշխատանքների հետ: Ավելին, նա 1977 թ. գերազանցության դիպլոմով ավարտել է նաև ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի հեռակա բաժինը:

1970-1971 թթ. Բ. Հարությունյանը եղել է արտասահմանյան ուսանողների աշխատանքների գծով դեկան, 1983-1985 թ. նույն բուհի կուսկոմիտեի քարտուղարի տեղակալ, 1985-1988 թթ.՝ Երևանի համալսարանի հրատարակչության տնօրեն, 1993-2004 թթ.՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, համատեղությամբ՝ 1997-2000 թթ.՝ ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ, իսկ 2007-2008 թթ. վարել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղարի պաշտոնը: Տարիներ շարունակ նա պատմության ինստիտուտում գործող գիտական աստիճաններ շնորհող խորհրդի փոխնախագահն էր: Անվանի հայագետի տարիների տքնաջան պրպտումների արգասիքը հայ պատմաաշխարհագրական մտքի եզակի հուշարձան հանդիսացող «Աշխարհացույց»-ն էր: «Մեծ Հայքի վարչաբաղաբական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի (արևմտյան և հարավային աշխարհներ)» դոկտորական ատենախոսությունը Բ. Հարությունյանը հաջողությամբ պաշտպանել է 1993 թ.: Ատենախոսությունում «Աշխարհացույց» -ի շահեկան քննությունը գիտնականը կատարել է բազմալեզու աղբյուրագիտական հենքի վրա: Նրան հաջողվել է ապացուցել, որ «Աշխարհացույց»-ը թվագրվել է 5-րդ դարով և որ նրա հեղինակը Մովսես Խորենացին է:

2005թ. Բ. Հարությունյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում, 2006թ ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիայի թղթակից անդամ:

Բ. Հարությունյանը նաև սիրված ու ճանաչված դասախոս էր: Հարուստ և բազմակողմանի գիտելիքներով օժտված գիտնականը շուրջ 50 տարի 1969 թ.-ից մինչև մահը դասավանդում էր մայր բուհում, հիմնականում պատմության ֆակուլտետում «Հայոց պատմություն» ընդհանուր դասընթացը, «Հայոց պատմության հին շրջանը», «Հայաստանի պատմական աշխարհագրություն» առարկաները, ինչպես նաև հատուկ դասընթացներ: 1993-1994 թթ.-ին Բ. Հարությունյանը դասախոսել է նաև Բեյրութի Հայագիտական բարձրագույն հիմնարկում: Նրա դասախոսությունները բավականին հետաքրքրական ու բովանդակալից էին, փաստերով հագեցած, տրամաբանական կուռ հիմքի վրա կառուցված, որտեղ լավագույնս մեկտեղված էին մատուցվող Նյութի գիտական բարձր մակարդակը և մատչելիությունը: Նա շատ հաճախ պատմական դեպքերն ու եղելությունները, փաստական տվյալները զուգորդում էր պատկերավոր դրվագներով՝ շեշտելով հայ ժողովրդի սխրագործ ներուժը: Նրա գործը հորդոր էր իր սաներին լինելու այս երկրի արժանավոր քաղաքացիներ՝ օժտված ազնիվ ու շիտակ կեցվածքով, մեր հոգևոր-մշակութային ժառանգության հանդեպ հոգածության ու պատասխանատվության բարձր զգացումով: Ուսանողական բազում սերունդներ, պատմության և այլ ֆակուլտետների շրջանավարտներ, որոնց դասավանդել էր Բ. Հարությունյանը, միշտ էլ հիացմունքով ու սիրով էին հիշում իրենց պատկառելի դասախոսի անկրկնելի դասախոսությունները: Պրոֆեսոր Բ. Հարությունյանը անմնացորդ նվիրումով իր գիտելիքներն է հաղորդել բազմաթիվ ուսանողների: Նրա հարյուրավոր սաներ աշխատում են հանրապետության գիտակրթական ու մշակութային բազմաբնույթ ոլորտներում, հաջողությամբ ղեկավարելով հանրապետության սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական և գիտակրթական կյանքի բազմաթիվ հանգուցային բնագավառներ: Գիտությունն իր մեջ ամբարած Բ. Հարությունյանին գիտական անաչառության հետ մեկտեղ բնորոշ էր ազգային շահի գիտակցումն ու պետական մտածողությունը: Այդ որակներն էին, որ իբրև դասախոս և մանկավարժ, նա ջանում էր ներարկել երիտասարդ բազմաթիվ սերունդների մեջ: Տասնամյակներ շարունակ կատարած գիտամանկավարժական հայրենանվեր աշխատանքով ու անմնացորդ նվիրումով Բ. Հարությունյանը մեծ հեղինակություն էր վայելում հանրապետության մտավորականության և ժողովրդի շրջանակներում:

Նրա արդյունավետ և չափազանց հարուստ գիտական ժառանգության ու հետաքրքրությունների հիմքում ընկած էին պատմաաշխարհագրական խոր գիտելիքները, աղբյուրագիտական ու լեզվագիտական բարձր պատրաստությունը, սուր հիշողությունը և հետազոտական ու վերլուծական անուրանալի ձիրքը: Բ. Հարությունյանը ավելի քան 500 աշխատությունների (մենագրություններ, հոդվածներ, քարտեզներ, զեկուցումների թեզիսներ, գրախոսություններ) հեղինակ է, որոնք նվիրված են առավելապես հին և միջնադարյան հայոց պատմության ու պատմական աշխարհագրության տարաբնույթ հիմնահարցերին: Զանի որ իմ գործընկերները Բ. Հարությունյանի գիտական և քարտեզագրական ժառանգությունների մասին առանձին զեկուցումներ ունեն, ուստի չկրկնվելու համար չեմ անդրադառնալու պատմագիտական ու քարտեզագրական այդ հարուստ ժառանգությանը, սակայն կցանկանայինք ընդհա-

Նուր գծերով ընդգծել նշանավոր հայագետի գիտահետազոտական աշխատանքին բնորոշ մի քանի կարևոր գծեր:

Մի քանի կենդանի ու մեռած լեզուներին տիրապետելը, տարաբնույթ աղբյուրների հիմնավոր իմացությունը և մասնագիտական գրականության քաջատեղյակությունը, բնատուր ձիրքը, լայնախոհությունը, ինքնուրույն մտածելակերպը գիտնականին հնարավորություն են տվել կուտակել գիտելիքների համակողմանի պաշար: Այն զուգորդվելով Բ. Հարությունյանի քննական ու վերլուծական Նախանձելի կարողությունների հետ՝ նրան թույլ էր տալիս հաջողությամբ զբաղվել հայոց պատմության տարբեր փուլերով: Այնուհանդերձ, նրա գիտական հետաքրքրությունների առանցքը հայոց հին և վաղ միջնադարյան պատմաշրջանն էր, որի նորովի հետազոտմամբ Նա շարունակեց Ն. Ադոնցի և հայագիտության մյուս մեծերի գործը: Ընդ որում Նա կամ լրացուցիչ կռվաններով հիմնավորում էր Նախորդ հետազոտողների այս կա՛մ այն դրույթը, կա՛մ էլ անաչառ քննությամբ նորովի սպառիչ լուսաբանում հայագիտության մեջ երկար ժամանակ քաղաքացիություն ստացած տեսակետներ, որոնք թվում էին վիճարկման ոչ ենթակա:

Գիտական ճշմարտությանը հասու լինելու համառության, վերլուծական մտածողության և ահռելի աշխատասիրության շնորհիվ պրոֆ. Բ. Հարությունյանը անգնահատելի ներդրում է ունեցել հայոց պատմության հին և միջնադարյան շրջանի շատ հիմնահարցեր խորությամբ ուսումնասիրելու գործում: Նրա գիտական աշխատությունները աչքի են ընկնում գիտական խորաթափանցությամբ, փաստական հարուստ նյութերի բազմակողմանի վերլուծությամբ կատարված եզրակացությունների տրամաբանությամբ ու գիտական նորույթով: Նա իր գիտական գործունեության ընթացքում մշտապես ուշադրություն է դարձրել Թուրքիայում և Ադրբեջանում պետական մակարդակի վրա դրված հայոց պատմության անհեթեթության աստիճանի հասնող կեղծարարության բացահայտմանն ու հակազդմանը:

Անվանի գիտնականն ու մանկավարժը շոշափելի ավանդ է ներդրել հայոց պատմությունը մատաղ սերնդին ճշմարտացի ու մատչելի հասցնելու գործում: Դա են վկայում նրա խմբագրությամբ ու հեղինակությամբ լույս տեսած դպրոցական դասագրքերը, Հայոց պատմության 5-ից 7-րդ դասարանների դասագրքերն ու դպրոցական քարտեզները: Բ. Հարությունյանը հայոց պատմության հանգուցային ու վիճահարույց հիմնախնդիրների շուրջ հաճախ էր հանդես գալիս մամուլում և հեռուստատեսությամբ, միջազգային ու հանրապետական գիտաժողովներում արտասահմանում Մոնպելիեում, Լոս-Անջելեսում, Վիեննայում, Աշխաբադում, Սանկտ-Պետերբուրգում և այլուր: Նրա անմիջական ղեկավարությամբ գիտական թեզեր են պաշտպանել շուրջ 2 տասնյակ ասպիրանտներ ու հայցորդներ:

Բ. Հարությունյանը հանրապետության հանրային խորհրդի անդամ էր, որտեղ հասարակության հուզող գրեթե բոլոր հարցերում աչքի էր ընկնում ակտիվ քաղաքական դիրքորոշմամբ, հասարակության համար խիստ անհրաժեշտ, հանրօգուտ շահերը պաշտպանելու վճռականությամբ: Նրա՝ իբրև պատմաբան մտավորականի բնորոշ գծերն էին համեստությունը, ազնվությունը, պարզությունը, անկեղծությունն ու գործին նվիրվածությունը, պատասխանատվության անչափ մեծ զգացումը, որոնց շնորհիվ վայելում էր կոլեկտիվի ու ուսանողության սերն ու հարգանքը:

Բ. Հարությունյանը ուներ նուրբ հումոր, գիտեր անթիվ ու անհամար անեկդոտներ, որոնց քանակը նրա հաշվարկով անցնում էր վեց հազարի սահմանը, խոստանում էր, որ դրանք անպայման գրի կառնի: Շատ էր սիրում հատկապես պատմել վանեցիների մասին անեկդոտներ: Սիրում էր իր ընտանիքը, հպարտանում էր իր ծնողներով: Ընդգծում էր իր հաջողությունների գործում կնոջ՝ Սվետայի դերը, որը ամեն տեսակ պայմաններ էր ստեղծել գիտությամբ զբաղվելու, քոչը՝ Ջևարիկին, իր նկատմամբ ցուցաբերած հատուկ հոգատարության համար և, վերջապես, իր միակ աղջկա՝ Աննայի հաջողությունները և նրա պարզևած թռնիկը, որը համարում էր իր կյանքի երջանիկ պահը:

Բ. Հարությունյանը արժանացել է Երևանի պետական համալսարանի Ոսկե մեդալի, Նոբելյան մրցանակակիր «Ալբերտ Շվայցերի» մեդալի, «Եկատերինա Մեծ» և «Ոսկե Արծիվ ոսկե թագով» գերմանական շքանշանի: 2006 թ. նրան շնորհվել է Մովսես Խորենցաու մեդալ, 2009 թ. գիտության վաստակավոր գործչի կոչում: Գիտնականի միջազգային ճանաչման վկայություններից են Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարության և «Ֆուլբրայթի» հիմնադրամի թոշակների արժանանալը, ինչպես նաև բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի «Արարատ» միջազգային ակադեմիայի անդամ լինելը:

Հայ պատմագիտությունն ու աշխարհագրական միտքը մշտապես առաջ տանող և հարստացնող, անխոնջ ավյունով լի վաստակաշատ հայագետը դեռևս շատ անելիքներ ուներ, որ կիսատ մնացին: Սակայն Բ. Հարությունյանի գիտակրթական ու հասարակական բեղուն գործունեությունը հայագիտությանը անմնացորդ նվիրվելու դաստիարակչական փայլուն օրինակ է:

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Է. ՄԻՆԱՍՅԱՆ